

տետի, արտադրության գիտելիքահենքության և գիտատեխնոլոգիական մակարդակի, արտադրողների կենսամակարդակի, աշխատանքի պայմանների, աշխատաժամանակի տևողության, լավածության, վարձատրության չափի, ազատ ժամանակի, որակային մակարդակի, հնարավորությունների օգտագործման, կենսամիջավայրին հասցվող վնասի և այլ պայմանների ոչ բավարար արտացոլումը: Համեմատվող երկրներում դրանց միջև այդ պայմանների տարբերությունները անկասկած պայմանավորում են նաև արտադրված ՀՆԱ-ի որակային տարբերություններ, հետևաբար և որոշակի անհամադրելիություն:

ՀՆԱ-ի հաշվարկման, տվյալ տարում ստեղծված արդյունքները դրանում ներառելու և այլ թերությունների վերը բերված թվարկումն իսկ արդեն ցուցում է հաշվարկված և իրականում ստեղծված ՀՆԱ-ի միջև զգալի տարբերությունների գոյության հնարավորությունը: Դա պահանջում է տնտեսության այդ կարևորագույն չափորոշիչի գնահատման մոտեցումների նորովի վերանայում և ճշգրտում, ընդ որում՝ միջազգային ընդգրկումով:

ԱՐՋՈՒՄԱՆ ՉԱԿՈՒՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Զոբանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ-ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտությունն այսօր նոր հարցադրումներով է հանդես գալիս իր ուսումնասիրման օբյեկտի՝ տնտեսական համակարգի զարգացման օրինաչափությունների ու հեռանկարների վերաբերյալ: Եվ դա պատահական չէ: Նախ և առաջ, գիտության ցանկացած ուղղության մեթոդաբանության կատարելիության և կանխատեսումային կարողության աստիճանը որոշվում է նրանով, թե ինչ խորությամբ և լրիվությամբ է այն ընդգրկում ուսումնասիրվող օբյեկտում ընթացող էվոլյուցիոն պրոցեսները: Երկրորդը, գիտության բոլոր և այդ թվում հասարակական, տնտեսական ուղղությունները լրացվում և խորանում են էվոլյուցիոն բովանդակությամբ, որը հանդես է գալիս ճանաչողության իր աշխարհայացքային, ինտեգրացիոն հատկությամբ առաջին հայացքից իրարից բավական հեռու գիտական ուղղությունների և ոլորտների համար: Երրորդը, տնտեսական համակարգը այսօր ակտիվ էվոլյուցիոնացվող համակարգ է, այն ապահովում է մարդու, քաղաքացու բարեկեցությունը, կյանքի բնականոն աճն ու զարգացումը, և այդ տեսակետից էլ տնտեսական համակարգերի էվոլյուցիոն զարգացման ուսումնասիրումը և նրա օրինաչափությունների բացահայտումն ունեն անգնահատելի բարձր գիտագործնական նշանակություն: Վերջապես չորրորդը, հասարակագիտության և հատկապես տնտեսագիտության թերզարգացածությունը բնագիտական ուղղությունների համեմատ (կենսաբանություն, երկրաբանություն տիեզերքաբանություն և այլն), էվոլյուցիոն պրոցեսների ընթացքի բացահայտման տեսակետից, վերածվեց անհաղթահարելի խոչընդոտի, որը և ճանաչողության արգելակման հիմնական պատճառներից է գիտության այս ոլորտում: Հետաքրքիրն էլ այն է, որ դարվինիզմի ձևավորման համար Մալթուսի և Մմիթի տնտեսագիտական գաղափարները սկզբունքային դեր ու նշանակություն են ունեցել ձևավորելու ընդհանուր էվոլյուցիոն տեսության գիտական սկզբունքները¹: Բացահայտվեց, որ կենդանի բնության մեջ էվոլյուցիայի շարժիչ ուժը

¹ Зойдов К.Х. Эволюционно-институциональный подход и методология проведения антикризисных мероприятий в переходной экономике ЭММ, 2004г. том 40, N3, стр.16.

միջտեսակային և ներտեսակային մրցակցությունն է, որը և թելադրում, դրդում է կենսակիր համակարգերին անընդհատ ինքնակատարելագործվել իրենց գոյատևությունը ապահովելու նպատակով: Հետագայում դարվինիզմի այս հայեցակարգը կիրառվել է սոցիալական համակարգերի, մասնավորապես տնտեսական համակարգերի էվոլյուցիոն զարգացման ներկայացման համար: Սակայն տնտեսական համակարգերի առանձնահատկությունների թերճանաչվածությունը, տնտեսական էվոլյուցիայի մեխանիզմների պարզեցման անհնարինությունը, կենսաբանականի մակարդակի, առայժմ թույլ չեն տալիս տնտեսական համակարգերի էվոլյուցիայի անհրաժեշտ մակարդակներով ու խորությամբ ընկալմանը:

Տնտեսական համակարգերի էվոլյուցիայի ճանաչման ուղղությամբ նշանակալից քայլ եղավ Կ.Մարքսի հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսությունը: Ֆորմացիաների օրինաչափ հաջորդափոխությունը մարքսյան տեսությունը բացատրում էր արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխադարձ կապով, հակադրվածությամբ ու միասնությամբ: Ֆորմացիաների մարքսյան տեսությունը թույլ տվեց պատմությունը դիտել որպես հասարակության էվոլյուցիոն զարգացման նկարագիր, այն առաջարկեց պարզ և բովանդակալից մոդել սոցիալական, տնտեսական էվոլյուցիայի երևույթների մեկնաբանման համար, սոցիալական և տնտեսական առաջընթացի էվոլյուցիոն տեսանկյունից ընկալման համար. սակայն մարքսիզմի հեղափոխական ուղղվածությունը, դասակարգային պայքարի նրա ներկայացումը որպես հասարակական առաջընթացի շարժիչ ուժի, բացահայտեցին նրա հակաէվոլյուցիոն բնույթը: Այդ իսկ պատճառով էլ հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման վարչահրամայական կառավարումը, քաղաքական սոցիալական և տնտեսական հարցերում բռնության և ռազմական ուժի կիրառումը բացահայտեցին նրա հակաէվոլյուցիոն գաղափարախոսական բովանդակությունը: Այդպիսի համակարգերի աստիճանական անկումը, կազմալուծումը, էվոլյուցիոն զարգացող շուկայական տնտեսության համեմատ նրանց անմրցունակությունը ապացուցեցին էվոլյուցիոն պրոցեսի ուժային արգելակման, խոչընդոտման անօգտակարությունը:

Տնտեսական համակարգերում էվոլյուցիոն պրոցեսների և մեխանիզմների վերաբերյալ հայացքների հետագա զարգացումը ընթացել է հիմնականում էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ ուղղությամբ: Այսօրվա դրությամբ այդ մոտեցումն ավելի հիմնավորված արդիական ու հեռանկարային է, ուստի և ավելի նախընտրելի է: Անցումային տնտեսություններում երևույթների վերլուծությունը էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ մոտեցմամբ թույլ կտա, նախ, խորությամբ ճանաչել անցումային պրոցեսները, այնուհետև, բարեփոխումների ընթացքը դարձնել ոչ այդքան հիվանդագին և շատ ավելի արդյունավետ: Ավելին, էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ մոտեցման կիրառությունը կրերի էվոլյուցիոն տնտեսագիտության զարգացմանը, հետևաբար և էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ մոտեցման կատարելագործմանը:

Անցումն ավելի պրոգրեսիվ շուկայական հարաբերությունների, տնտեսավարող սուբյեկտների անհամեմատ մեծ ազատության աստիճանով, հակառակ մեր սպասումների բերեց ոչ թե տնտեսական մեծ աճի, այլ հակառակը, լայնածավալ ճգնաժամի ու խոր անկման: Անցումային այդ ճգնաժամերի էվոլյուցիոն սկզբնապատճառների վերլուծությունը բավականին խոստումնալից է նախ էվոլյուցիոն պրոցեսների հետագա ճանաչողության և երկրորդը՝ այդ ճգնաժամերի խորացումն արագ հաղթահարելու տեսակետներից:

Ինստիտուցիոնալ-էվոլյուցիոն տեսությունը տնտեսագիտության ժամանակակից ուղղություններից է: Այն ձևավորվել է XX դարի վերջերին՝ հակադրվելով, հերքելով հասարակական և այդ թվում տնտեսական պրոցեսների մեխանիկական դետերմինացման գաղափարախոսությունը:

Ինստիտուցիոնալ-էվոլյուցիոն գաղափարախոսությունը ընդդիմացավ տնտեսական համակարգերի զարգացման վերաբերյալ դասական տնտեսագիտության մեջ ընդունված տեսա-

կետներին: Այն տեսակետներին, որոնք ուշադրություն չէին դարձնում տվյալ հասարակական-տնտեսական համակարգում ձևավորված և գործող ինստիտուցիոնալ կառուցվածքների և կազմակերպությունների էվոլյուցիային:

Ինստիտուցիոնալիզմը, որպես ժամանակակից տնտեսագիտության տեսության երեք հիմնական ուղղություններից մեկը, արդյունավետ մտքեր շատ է տվել: Նրանց կիրարկումը, անտարակույս, կրերի տրանսֆորմացիոն ճգնաժամերի ճանաչմանը և հաղթահարմանը: Ինստիտուցիոնալիզմի հիմնական գաղափարն այն է, որ տնտեսական երևույթների դետերմինացիան պետք է բացատրել ոչ միայն անմիջական տնտեսական գործունեության հետ կապված, այլ առավել միջնորդավորված, խորքային, ուղղակիորեն անճանաչելի պատճառներով, համակարգային տերմինաբանությամբ ասած հասարակության մեջ ձևավորված տարբեր ինստիտուտների փոխգործողությունների համակարգով: Հասարակության զարգացման ընթացքում գոյատևած ինստիտուտները և տնտեսական գործունեության օբյեկտները հանդես են գալիս բովանդակության և երևույթի միասնությամբ: Ինստիտուցիոնալիզմի համար այսպիսի կանխադրույթի ընդունումը ենթադրում է էվոլյուցիոն գաղափարախոսությամբ առաջնորդվելու նախապատվություն: Չէ՞ որ ինստիտուտները, ինստիտուցիոնալիզմի ներկայացմամբ արտահայտելով տնտեսական գործունեության բովանդակությունը, անընդհատ փոփոխվում, կատարելագործվում, էվոլյուցիոն զարգանում են և հասարակական, տնտեսական համակարգում կարող են հանդես գալ որպես էվոլյուցիոնացվող միավորներ: Ընդհանրապես մարդկային բոլոր ինստիտուտները էվոլյուցիոնացվող միավորներ են ցանկացած հասարակական կառուցվածքում: Այստեղից էլ «ինստիտուտ» հասկացության ծագումնաբանական մեկնաբանությունը լատիներենից՝ «*institutum*» (այսպես օրինակ՝ սոցիալական, տնտեսական կամ ավելի ընդհանուր հասարակական կարգի սահմանում, կազմակերպում կամ հաստատում), որն արտահայտում է նաև պատմաէվոլյուցիոն ձևավորման տեսակետ:

Ինստիտուցիոնալիստները, սակայն, այդ հասկացությանը տալիս են երկակի բնութագրություն՝ ինստիտուցիաներ և ինքնին ինստիտուտներ: Ինստիտուցիաներն ընդգրկում են սովորույթները, ավանդույթները, վարքի նորմերը և այլն, այսինքն՝ այն ինստիտուցիոնալ ձևերը, որոնք ընդունված են տվյալ հասարակությունում: Ինչ վերաբերում է ինստիտուտներին, ապա դրանք հանդես են գալիս կազմակերպությունների, հիմնարկների, իրավական և օրենսդրական կառույցների կարգավիճակով: Վերջիններս վերոնշյալ ինստիտուցիաներին տալիս են պաշտոնական, իրավակազմակերպական բնույթ, նպաստում են դրանց իրականացմանը, անհրաժեշտության դեպքում ապահովում են ինստիտուցիաների կատարման պարտադրությունը:

Վաղ ինստիտուցիոնալիզմի գաղափարախոսությունը հենվել է նրա հիմնադիր Վերլենի այն թեզի վրա, որ պետք է տնտեսական գործունեությունն ամբողջությամբ շրջել, ուղղել ռեսուրսների բառսային վատնումից դեպի սպառողների կոնկրետ պահանջումներին բավարարման նպատակներին, ընդ որում այդ շրջադարձը պետք է լինի էվոլյուցիոն, այլ ոչ թե ռևոլյուցիոն շրջադարձ:

Ջոն Բոմոնսը կատարեց հաջորդ քայլը, բացահայտեց և վերլուծեց իրավական ինստիտուտների և սոցիալական կոնֆլիկտների դերը տնտեսական էվոլյուցիայի ընթացքում: Նրա կարծիքով իրավական հարաբերություններն առաջնայնություն ունեն տնտեսական հարաբերությունների նկատմամբ, այդ գերակայության հիման վրա էլ կարող են հարթվել սոցիալական կոնֆլիկտները, որն ապահովում է տնտեսական համակարգի էվոլյուցիոն զարգացումը:

Ու.Միտչելը տնտեսական ցիկլերի առկայությունը բխեցրեց գործարար ակտիվության էվոլյուցիայից և մշակեց այդ ակտիվության խրախուսման մեթոդներ:

Վ.Օյբենը առաջադրեց օրդոլիքերալիզմի իր այն թեզը (Օրդնունգ), ըստ որի կատարյալ տնտեսական ազատությունը պետք է զուգակցել կազմակերպական խիստ կարգով: Վ.Օյբենի և

Լ.Էրիսարդի էվոլյուցիոն գաղափարները նշանակալից դեր ունեցան գերմանական տնտեսական ճգնաժամների հաղթահարման և «տնտեսական հրաշքի» իրականացման գործում:

Գ.Մյուրդալը իր էվոլյուցիոն գաղափարները օգտագործեց թույլ զարգացած երկրներում տնտեսական ճգնաժամների հաղթահարման խնդիրների լուծման համար: Նա մշակեց ինստիտուցիոնալ կառուցվածքների բարեփոխման վերաբերյալ մեթոդական ցուցումներ և դրանք օգտագործեց մի շարք թույլ զարգացած երկրների տնտեսության վերականգնման գործընթացում:

Վերջին ժամանակներս լայն տարածում ստացած նեոինստիտուցիոնալիզմը կտրուկ հրաժարվեց վաղ ինստիտուցիոնալիզմի տեխնոկրատական ավանդույթներից և տնտեսագիտական հետազոտություններում առաջարկեց ուշադրությունը սևեռել տնտեսական գործունեության հիմնական սուբյեկտին՝ մարդուն, նրա բարեկեցության մակարդակին և սոցիալական միջավայրում նրա ինքնորոշմանը: Այսպես, օրինակ, Ռ.Բոուզի «սեփականության իրավունքի», Ջ.Բյուկենենի «հասարակական ընտրության», Ջ.Գելբրեյթի «հետինդուստրիալ հասարակության» տեսությունները տնտեսական ինստիտուտների էվոլյուցիան դիտում են որպես մարդու ինքնորոշման հնարավորությունների բարձրացման միջոց: Այսօր տնտեսության էվոլյուցիոն զարգացման գաղափարներն առավել ինտենսիվ մշակվում են նեոինստիտուցիոնալիզմի շրջանակներում:

Էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ ուղղության ամենաակտիվ կողմնակիցներից մեկը՝ Ջ. Խոջսոնը, միաժամանակ ամենահամոզված նեոդարվինական է, նրա բոլոր տնտեսագիտական մտքերը հիմնավորում են ստացել կենսաբանական նմանօրինակներով: Ոչ քննադատական այդպիսի նմանակումը, սակայն, արդարացիորեն մերժվում է շատերի կողմից, չէ՞ որ ինստիտուտների էվոլյուցիոն զարգացումը շատ առանձնահատկություններ ունի կենդանի օրգանիզմների էվոլյուցիոն զարգացման համեմատ, ուստի և խիստ տարանջատման ենթակա են¹:

Ջ.Խոջսոնը տնտեսական էվոլյուցիայի տեսությունները բաժանում է երկու մեծ խմբերի՝ զարգացման տեսության և գենետիկայի տեսության: Որպես առաջին ուղղության ներկայացուցիչներ նա ներկայացնում է Կ.Մարքսին և Ի.Շումպետերին, որոնք անտեսում են ինստիտուցիոնալ գենետիկայի տեսակետները և առաջնորդվում են այսպես կոչված «առաջընթացի պարուրակի» վարքի տրամաբանությամբ: Եթե ինստիտուցիոնալ գենետիկան հենվում է «պահպանողական» տարրերի «գեների» տնտեսավարող սուբյեկտների մի սերնդից մյուսին փոխանցելու մեխանիզմի գործունեության վրա, ապա զարգացման տեսությունը տնտեսական էվոլյուցիայի ընթացքը ներկայացնում է պարուրազծով զարգացման տրամաբանությամբ, որը հնարավոր է արհեստականորեն հետ ու առաջ «պտտացնել», «պտույտները» արագացնել տնտեսական բարեփոխումներով, տնտեսության արդիականացմամբ և նույնիսկ հասարակական հեղափոխությամբ:

Տնտեսական էվոլյուցիայի տեսության մյուս ուղղության կողմնակիցները՝ Ա.Սմիթը, Թ.Վերլենը և մյուսներ, առաջնորդվում են «տնտեսական գեների» գոյությամբ, որոնք մարդկային գեների նմանօրինակներն են որպես պահպանողական տարրեր և զարգանում են մարդու էության և հատկությունների փոփոխմամբ պայմանավորված: Ընդ որում այս ուղղության ներկայացուցիչների միջև տարաձայնությունը գեների անփոփոխ և փոփոխական տարր համարելու մեջ է: Այսպես կոչված դարվինականները չնայած ընդունում են գեների փոփոխությունները վարկածը, սակայն մերժում են նրանց ձեռքբերովի հատկանիշների ժառանգական փոխանցման տեսակներն այն դեպքում, երբ լամարկիստները գեների ձեռքբերովի հատկանիշների ժառանգական փոխանցումը համարում են հնարավոր:

Վերոնշյալ համառոտ մեկնաբանությունից բացահայտվում է, որ ինչպես Ջ.Խոջսոնը, այնպես էլ էվոլյուցիոն տնտեսագիտության մյուս ներկայացուցիչներն ազատ օգտվում են կենսաբանության և տնտեսագիտության նմանարկումից: Իսկ դա նշանակում է, որ տնտե-

¹ Дорошенко С.В., Попов Е.В. «Об эволюционной региональной экономике. Экономическая наука современной России, N 1, 2002, стр. 32».

սագիտական էվոլյուցիոնիզմն առայժմ չի մշակել իր սեփական մեթոդաբանությունը, ուստի և փոխ է առնում այն կենսաբանությունից և գենետիկայից պատրաստի վիճակում: Սակայն այսպիսի ռեդուկցիոնիզմը՝ սոցիալ-տնտեսական էվոլյուցիան կենսաբանական կամ գենետիկական էվոլյուցիայի հանգեցնելը արժանահավատ ճանաչողական արդյունքներ ապահովել չի կարող, որովհետև մույնացվում են տարբեր ոլորտների և որակական տարբեր մակարդակների էվոլյուցիոն երևույթներն ու օրինաչափությունները:

Սոցիալ-տնտեսական երևույթների էվոլյուցիոն զարգացումը զգալի առանձնահատկություններով է ընթանում, և այն հանգեցնել կենսաբանական երևույթների էվոլյուցիոն օրինաչափություններին նշանակում է արհեստականորեն սահմանափակել նրանց բովանդակությունն ու ճանաչման մեթոդաբանությունը: Այնպես որ սոցիալ-տնտեսական էվոլյուցիայի օրենքների ու օրինաչափությունների բացահայտման գիտագործնական գործընթացում պետք է հաշվի առնել ռեդուկցիոնիզմի մեթոդաբանության ոչ լիարժեք օգտագործելիության պայմանը:

Վ.Մանսկին առանձնացնում է էվոլյուցիոն տնտեսագիտության երեք հիմնական հետազոտական ուղղություններ՝ ինստիտուցիոնալ, միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական¹: Ինստիտուցիոնալ ուղղություն շրջանակներում նա առանձնացնում է երկու հիմնական տեսակետներ՝ հին ու նոր ինստիտուցիոնալիզմներ: Հինը ինստիտուտները դիտում է որպես հասարակության մեջ ձևավորված սոցիալական կառուցվածքներ, որոնք մարդկանց և կազմակերպությունների գործողությունները ուղղորդում են մախընտրելի մպատակների: Նորը՝ հասարակության մեջ ձևավորված սոցիալական կառուցվածքները դիտում է որպես «խաղի» կանոններ սահմանողներ: Միկրոտնտեսագիտության ուղղությունը կազմակերպությունների (ընկերությունների) էվոլյուցիան դիտում է նրանց ծագման, գործունեության ընթացքում վիճակի փոփոխման, միմյանց հետ փոխգործողության, «մահացման», «ժառանգափոխության», «մուտացիայի» և այլ մեխանիզմների տեսակետներից: Մակրոտնտեսագիտության ուղղությունը սոցիալ-տնտեսական էվոլյուցիան դիտում է որպես «տեխնոլոգիական կացութաձևերի» էվոլյուցիոն հաջորդափոխություն, և որպես տնտեսության ցիկլային զարգացման մշտական գործընթաց²:

Միաժամանակ, չնայած վերոնշյալ հայեցակարգի գրավչությանը, որոնք շատ կարևոր դեր ունեն էվոլյուցիոն պրոցեսների տնտեսագիտափիլիսոփայական և պատմատնտեսագիտական գիտակցման ուղղությամբ, նրանք առայժմ չեն գտնում կոնկրետ կիրառություն տնտեսական համակարգի դինամիկայի օրենքների և օրինաչափությունների բացահայտման ու ընթացիկ խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ իսկ տեսակետից էլ տնտեսագիտության էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ ուղղությունն անհրաժեշտություն ունի նոր և ոչ ստանդարտ գաղափարների, որոնք կխորացնեն մեր գիտելիքները տնտեսական համակարգի էվոլյուցիայի օրենքների, օրինաչափությունների և մեխանիզմների վերաբերյալ:

Անտարակույս, այդպիսի նոր գաղափարների մշակման ու կիրառման գործընթացին մեծապես կնպաստեն տնտեսական ճգնաժամերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, հատկապես այն խորը ճգնաժամերի, ինչպիսիք էին XIX դ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, 30-ական թվականների «խորն անկումը» և վերջապես XX դարի վերջի ու XXI դարի սկզբի համակարգային ճգնաժամը նախկին սոցիալիստական երկրներում: Միգուցե սոցիալիզմի տնտեսական ճգնաժամն էր պատճառը, որ այսօր կարելի է նշել էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ տնտեսագիտության հետխորհրդային (հիմնականում ռուսաստանյան) դպրոցի հաջողությունների մասին:

¹Маевский В.И. Введение в эволюционную макроэкономику. М. Япония сегодня. 1997г. стр.10.

²Зондов К.Х. Эволюционно-институциональный подход и методология проведения антикризисных мероприятий в переходной экономике. ЭММ, 2004г. том 40, N3, стр.19.

Ռուսական դպրոցի առավել արդյունավետ աշխատող տնտեսագետներից կարելի է մատնանշել Լ.Աբալկինին, Դ.Լվովին, Վ.Մակարովին, Վ.Մակսկուն, Վ.Պոլտերովիչին, Ա.Նետտերենկոյին, Վ.Վոլկոնսկուն, Յու.Յակովեցին, Գ.Քլեյների, Յու.Օվսինկոյին, Ա.Օլեյնիկին, Օ.Սուխարևին և մյուսներին: Նրանց հետազոտություններում կան շատ առաջադեմ գաղափարներ էվոլյուցիոն-ինստիտուցիոնալ տնտեսագիտության թե՛ տեսական և թե՛ գործնական կիրառության զարգացման ուղղություններով: Այդպիսի գաղափարներից է, օրինակ, Գ.Քլեյների մշակած այսպես կոչված «ձեռնարկությունների ինտեգրացիոն տեսությունը»¹: Այդ տեսության համաձայն, ձեռնարկությունների փոխգործողությունը տնտեսական համակարգի շրջանակներում բերում է ոչ միայն ապրանքանյութական բարիքների հոսքերի առաջացման, այլև ինստիտուցիոնալ կառուցվածքների ձևավորման: Հենց այդ կառուցվածքներն էլ հանդես են գալիս որպես տնտեսական համակարգի ամբողջացման, միացման «մկանային հյուսվածքները», առանց դրանց չեն կարող արդյունավետ գործել տնտեսական համակարգի շուկայական մեխանիզմները:

Վ.Պոլտերովիչին հաջողվել է կարևոր արդյունքներ ստանալ այսպես կոչված «ինստիտուցիոնալ թակարդների» ֆենոմենի մեկնաբանման, կոռուպցիայի առանձնահատկությունների ուսումնասիրման, ինստիտուտների մի տնտեսական միջավայրից մյուս՝ թերզարգացած միջավայրում պատվաստման խնդիրների ուսումնասիրման ոլորտներում²:

Վ.Մակարովի աշխատանքներում զարգացվել է տնտեսական բարիքների սպառման բազմաստիճանության գաղափարը³, որը ըստ հեղինակի թույլ կտա սոցիալ-տնտեսական ինստիտուտներին դուրս գալու մշտական ճգնաժամից: Ելքը նա տեսնում է սոցիալական բարիքները (ներառյալ կրթական, առողջապահական, բնակարանային կոմունալ և այլ ծառայությունները) ցածր հաստատագրված գներով երկրի բնակչությանը տրամադրելու միջոցով բարձրացնել կենսամակարդակը, իսկ որոշակի մակարդակի հասցնելուց հետո թողնել շուկայական մեխանիզմներով գնազույացմանը:

Դ.Լվովի, Վ.Գրեբեննիկովի, Վ.Պրեսնյակովի և մյուսների աշխատանքներում զարգացվել է սեփականության էվոլյուցիոն տրանսֆորմացիայի գաղափարը: Այն հիմնվում է սեփականության իրավունքի տարրերի ամբողջությունից նրա որոշակի խմբի հաջորդական առանձնացման տրամաբանության վրա: Այսպես օրինակ, գույքային համալիրի անմիջական տիրապետման իրավունքից նրա օգտագործման իրավունքի, գործարարական իրավունքների առանձնացման տրամաբանության վրա: Ընդ որում, գործարարական գործառույթների ձևավորումը և զարգացումը նրանց կողմից դիտվում է որպես ընտրության և մրցակցության էվոլյուցիոն զարգացման գործընթաց:

Վ.Մակսկին իր էվոլյուցիոն տեսությունը կառուցել է մակրոգեներացիաների ձևավորման և զարգացման տեսակետի վրա⁴: Հեղինակի ձևակերպմամբ մակրոգեներացիաները տնտեսական համակարգի այնպիսի ենթահամակարգեր, էվոլյուցիոն միավորներ են, որոնք կենդանական որևէ տեսակի նման ծնվելու, ապրելու և մահանալու հատկանիշներով են օժտված: Ավելին, տնտեսական համակարգում «ապրող» այդ մակրոգեներացիաները իրենց ֆունկցիոնալ հատկանիշներով կարող են լինել «երիտասարդ» և «ծեր»: Այնպես որ մակրոմակարդակի ներկայացումը մակրոգեներացիաների ամբողջության միջոցով, հեղինակի կարծիքով, թույլ կտա տնտեսական համակարգը դիտել որպես էվոլյուցիոն զարգացող համակարգ: Բացի դրանից «երիտասարդ» և «տարեց» մակրոգեներացիաների համատեղ ֆունկցիոնավորման հիման վրա կարելի է կառուցել տնտեսական պարբերաշրջանների (ցիկլերի) գոյության և հաջորդափո-

¹ Клейнер Г. Эволюция институциональных систем. М. Наука 2004г.

² Полтерович В.М. Трансплантация экономических институтов. Экономическая наука современной России, N4, 2001г.

³ Макаров В., Клейнер Г. Развитие бартерных отношений в России: институциональный этап. М. ЦЭМИ, 1999г.

⁴ Маевский В. Эволюционная теория и технологический прогресс. ВЭ N 11.

խության տեսութիւնը, որի տրամաբանական հիմքը պարբերաշրջանային զարգացման էնդոգեն մեխանիզմի (ինքնազարգացման մեխանիզմի) մոդելն է:

Առանձնակի ուշադրութեան է արժանի այն թեզը, ըստ որի անցումը սոցիալիստականից շուկայական տնտեսավարմանը նախկին խորհրդային հանրապետություններում ընթանում է էվոլյուցիոն փոփոխություններով՝ հաջորդաբար անցնելով նրա երեք փուլերը, որոնցից յուրաքանչյուրում էվոլյուցիան հանդես է գալիս իր առանձնահատկություններով¹: Առաջին՝ այսպես կոչված «լատենտային» էվոլյուցիայի փուլում տեղի է ունենում փոփոխությունների ներուժի կուտակում: Երկրորդ՝ այսպես կոչված «ադապտացիոն» էվոլյուցիայի փուլում տեղի է ունենում տնտեսավարող սուբյեկտների, հասարակության ադապտացիան փոփոխվող պայմաններին: Վերջապես երրորդ՝ համակարգային էվոլյուցիայի փուլում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման մեխանիզմների հիման վրա: Այս փուլում է, որ ըստ հեղինակների վերջնականապես ձևավորվում է շուկայական ինստիտուտների համակարգը, համակարգային ինստիտուցիոնալ զարգացումը գերաճում է համակարգային էվոլյուցիայի:

Վերոնշյալ գաղափարը մեկ այլ տեսանկյունով ներկայացման տարբերակ է տնտեսական համակարգի էվոլյուցիան կազմակերպական կառուցվածքների և ինստիտուցիոնալ կանոնների փոխկապակցված էվոլյուցիաներով ներկայացումը²:

Դժվար չէ սակայն նկատել, որ կազմակերպական կառուցվածքների առանձնացումը ինստիտուցիոնալ կանոններից խիստ պայմանական է, ուստի և նրանց առանձին էվոլյուցիոնացումն արհեստական է դառնում:

• Ընդհանուր էվոլյուցիոն տեսության սկզբունքներին համապատասխանում է այն միտքը, որ տնտեսական ճգնաժամերը պետք է դիտել որպես էվոլյուցիոն պրոցեսի ընթացքային միջադեպեր, երբ հնարավոր են թե՛ ինտենսիվ զարգացումները և թե՛ ինտենսիվ կազմալուծումները³: Ծգնաժամերը, ըստ հեղինակների, էվոլյուցիոն զարգացման ծրագրի փոփոխություններ են, որոնք նոր էվոլյուցիոն զարգացման ներուժ են կուտակում, որոշ ժամանակ անց առավել մեծ ինտենսիվությամբ հանդես գալու հավանականությամբ:

Անկասկած հիմնարար բնույթ ունի Գ.Բլեյների՝ ինստիտուտների գենեզիսի տեսությունը, ըստ որի այն իրականացվում է ոչ թե պլանաչափ կամ քառասյին բարեփոխումների միջոցով, այլ ընթանում է բարեփոխողների գործունեության հետ կապ չունեցող ինստիտուցիոնալ այնպիսի ամբողջական մի միջավայրում, որտեղ ընդգրկված են գործող, հերթափոխությամբ դրանց նախորդող և հաջորդող ինստիտուտները⁴: Համաձայն ինստիտուտների գենեզիսի տեսության՝ ինստիտուտների էվոլյուցիոն զարգացման պրոցեսում տնտեսավարող սուբյեկտներին առաջնորդող շահերը հանդես են գալիս որպես «կատալիզատորներ» այլ ոչ թե որպես նախատիպեր⁵: Ինստիտուտները ծագում և զարգանում են ինստիտուտների նախատիպերից, այլ ոչ թե շահերից: Գ.Բլեյների կարծիքով ինստիտուցիոնալ «պրոտեզավարումը»՝ արհեստական, մտացածին ինստիտուտների ներդրումը ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման միջոցով էվոլյուցիոն զարգացման գործընթաց լինել չի կարող: Ներդրված ինստիտուտների՝ «պրոտեզների» գոյատևման հավանականությունը անհամեմատ փոքր է նախատիպերի գոյատևման հավանականությունից, նրանք չեն կարող դիմանալ հասարակական զարգացման «սելեկցիոն» ընտրապայքարին:

¹ От кризиса к росту. Под ред. Дерябиной М.А. 1998г.

² Улюкаев А. Переход. О политико-экономических проблемах системной трансформации в России. ВЭ N 10, 1996, стр.15.

³ Анатомия кризисов. Под редакцией А.Д. Арманды и др. М Наука 1999.

⁴ Клейнер Г.Б. Эволюция институциональных систем. М. "Наука" 2004г.

⁵ Клейнер Г.Б. Особенности процессов формирования эволюции социально-экономических институтов в России. М. ЦЭМИ РАН 2001г. стр. 48-58.

Ինստիտուտների գեներալի տեսությունը սակայն թույլ չի տալիս իր սկզբունքները տարածելու համակարգում առկա ինստիտուտների ամբողջության վրա: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր առանձին վերցրած տնտեսական համակարգում միաժամանակ գործում են էվոլյուցիոնացված, գոյատևված, նոր ձևավորվող և ներդրված (արհեստական, մշակված) ինստիտուտներ: Ինստիտուտների էվոլյուցիոն զարգացման պրոցեսը տեղի է ունենում հենց այդ ամբողջության մեջ, և դրանով գործընթացն ավելի բարդ ու երկարաժամկետ բնույթ է կրում, քան համասեռ էվոլյուցիոնացվող ինստիտուտների ամբողջության դեպքում:

ԱՐԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կենտրոնացված կառավարման մոդելից ազատական հարաբերություններին կտրուկ անցման արդյունքում ինչպես նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում ծագեցին բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից, թերևս, կարևորագույնն ազգային անվտանգության ապահովումն էր: Ակնհայտ է, որ լինելով հզոր երկրի փոքր մասը, Հայաստանն, ըստ էության, չէր կրում մեծ ծանրաբեռնվածություն այդ երկրի անվտանգության ապահովման գործում: Նոր պայմաններում, անշուշտ, երկրի համար գերակա խնդիրներից մեկը պետք է դառնար ազգային անվտանգության համակարգի ստեղծումը:

Ազատ շուկայական հարաբերությունների ձևավորման և իրավական, սոցիալական, ժողովրդավարական պետության կերտման ձգտումն ինքնին նշանակում է քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումների իրականացում, այդ թվում՝ տնտեսական և քաղաքական ազատությունների երաշխավորում, սեփականության բազմաձևության ներդրում, միջազգային հանրությանը և համաշխարհային տնտեսությանը ներդաշնակ ինտեգրման բազմաշերտ հիմնախնդրի լուծում և այլն:

Ազատական արժեքային համակարգի ներդրումը պետք է ենթադրի դրա հիմքում դրվող սկզբունքների ձևավորում, նպատակամիտությունն ապահովող փոխկապակցված ու փոխապայմանավորված ենթահամակարգերի ստեղծում, գործունեության արդյունավետ մեխանիզմների մշակում և այլն: Այդպիսի համակարգի ներդրումն, անշուշտ, պահանջում է որոշակի ժամանակահատված, որի տևողությունն, ի թիվս այլ խնդիրների, զգալիորեն պայմանավորված է անցումային փուլում տվյալ պետության համար չափազանց կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ամկայությամբ և արժեքային համակարգի նկատմամբ դեռևս նախկինում ձևավորված, ձևախեղված բարոյահոգեբանական մթնոլորտով: Այս առումով, անշուշտ, բացառություն չէր կարող լինել Հայաստանի Հանրապետությունը, որտեղ անկախ պետականության կայացմանը հաջորդած տարիներին ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ արձանագրվեցին շոշափելի ձեռքբերումներ: Մասնավորապես, հարկ է նշել ինչպես բազմաթիվ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատումն ու զարգացումը, արցախյան հակամարտության արդյունքում առավել նպաստավոր պահին զինադադարի կնքումը, սոցիալական բարդ խնդիրների լուծումը, այնպես էլ «առաջին սերնդի» տնտեսական (հողի, ինչպես նաև առևտրի, ծառայությունների ոլորտի և արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհում, ազգային դրամի ներդրում, բանկային համակարգի ձևավորում, էներ-